

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ ՉՈՐՏ ԴՊԻՐՆԵՐ ԵՒ ՀԻՆՔ ՍԱՐԿԱԽԱԳՆԵՐ ՁԵՌՆԱԴՐՈՒԵՑԱՆ

Ուրբաթ, 22 Դեկտեմբերին, Դամասկոսի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունցաւ չորս պատանիներու դպրութեան ձեռնադրութիւն: Երկար տարիներ իրենց ծառայութիւնը բերած պատանիներ՝ Հրայր Դանիէլեան, Արա Քահքէճեան, Յարութիւն Դանիէլեան եւ Արման Խորոզեան, որոնք պարտաճանաչութեամբ կը յաճախէին կիրակնօրեայ Պատարագներուն եւ մումակրութեամբ ու իրենց մանկական զուլալ ձայնով կը ձոխացնէին Ս. Պատարագի երգեցողութիւնը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանի ձեռամբ արժանացան դպրութեան չորս աստիճաններուն: Նոյն օրը հինգ ուրարակիրներ ստացան կիսասարկաւագութեան աստիճան:

Կիրակի, 24 Դեկտեմբերին, հանդիսաւոր կերպով կատարուեցաւ Ս. Ստեփաննոսի եւ սարկաւագներու տօնը: Այս առթիւ Ս. Պատարագ մատուցեց Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը: Յընթացս Ս. Պատարագի հինգ կիսասարկաւագներ՝ Դաւիթ Բարսեղեան, Կարօ Մէսճեան, Յարութիւն Աթոքանեան, Շանթ Մէսճեան եւ Գաբրիէլ Թանաշեան, ձեռամբ Սրբազան Հօր, ձեռնադրուեցան սարկաւագ: Արմաշ Սրբազան իր օրուայ պատգամին մէջ շնորհաւորեց նորընծայ սարկաւագները՝ իրենց տօնին համար, եւ ապա ըսաւ. «Սիրելի սարկաւագ եղբայրներ: Այսօր տօն է, ցնծութիւն եւ ուրախութիւն մեզ բոլորիս համար, քանզի ձեր սարկաւագական ձեռնադրութեամբ նոր ոգի մուտք կը գործէ մեր Ս. Սարգիս եկեղեցիէն ներս, եւ մեր թեմը Ձեր միջոցաւ կերիտասարդանայ ու երիտասարդ աւիւնով, ոյժով ու կորովով պիտի շարունակէ ծառայել ժողովուրդին»:

Այնուհետեւ Սրբազան Հայրը յորդորեց նորընծայները լաւագոյնս արժեւորել այն մեծագոյն առաքելութիւնը, որ ստանձնեցին իրենք՝ դառնալով Քրիստոսի լուծի կրողներ: Ապա Առաջնորդ Հայրը հրաւիրեց նորընծայները առաւել նախանձախնդրութեամբ ու ջանասիրութեամբ լծուիլ իրենց պարտականութիւններու իրականցմանը՝ ուղեցոյց ունենալով Ս. Ստեփաննոսի հաւատքի ամրութիւնն ու արիասիրտ ոգին: Սրբազան Հայրը իր յատուկ շնորհաւորանքները ուղղեց նաեւ երկարամեայ տարիներու ծառայութիւն ունեցող Բրշ. Մորիս սրկ. Տէմիրճեանին՝ մաղթելով քաջատոյջութիւն, արեւշատութիւն եւ դէռ երկար տարիներու ծառայութիւն:

Յաւարտ Ս. Պատարագի կազմակերպուեցաւ սիրոյ սեղանի պատիւ նորընծայ սարկաւագներուն, որուն մասնակցեցան նաեւ դպրաց դասի անդամները: